



## ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՐԵԼԸ ԸՍՏ «ՈՐՈՂԱՅԻՆ ՓԱՌԱՅ»-Ի

### Մ. Մ. ԹԵԼՈՒՆՑ

«Որոզայթ փառաց»-ի (18-րդ դարի 70-80-ական թվականներ) և ԴԴ 1995 թ. սահմանադրության միջև ընկած է 200 տարուց ավելի մի հսկայական ժամանակաշրջան. և այս առումով, կարող է առնվազն տարօրինակ թվալ իրարից այդպիսի ժամանակահատվածով բաժանված երկու իրավական ակտերի համեմատությունը: Սակայն նման տարակուսանքը հիմնականում սոսկ արտաքին տպավորության արդյունք է, քանզի իրականում, մի շարք հանգամանքների ուժով, այդպիսի համեմատությունները միանգամայն հնարավոր են: Ամենից առաջ նրանով, որ երկուսն էլ բուրժուական-կապիտալիստական հարաբերությունների ժամանակաշրջանի ծնունդ են: Երկուսի ուժին էլ ընդհանուր առմամբ նույնն է: Այն հանգամանքը, որ «Որոզայթ»-ը ծնավորվել է բուրժուա-կապիտալիստական հարաբերությունների սկզբնավորման և հաստատման, իսկ ԴԴ սահմանադրությունը մի ժամանակաշրջանում, երբ այդ հարաբերությունները, մանավանդ ԽՍՀՄ-ի և սոցիալիստական համակարգի մի շարք երկրների քայքայման, վերացման հանգամանքների ուժով, ծաղկման, լճացման կամ գերիշխանության գործընթաց էին ապրում, բոլորովին էլ չի խանգարում տարբեր ժամանակահատվածներում ստեղծված, բայց ոգով, հաճախ նաև մանրամասներով ընդհանուր այդ երկու իրավական ակտերի համեմատական, պատմաիրավական հետազոտմանը<sup>1</sup>:

Ամենաընդհանուր գծերով ընդգծենք «Որոզայթ»-ի հիմնական արժանիքները.

1. Սա հայ առաջին օրենքների ժողովածուն է՝ ի տարբերություն «Կանոնագիրք հայոց»-ի (8-րդ դար), Մխիթար Գոշի դատաստանագրքի (1184 թ.), Սմբատ Ապարապետի դատաստանագրքի (1265 թ.), Աստրախանի հայոց դատաստանագրքի (1765 թ.), որում առաջին անգամ ստեղծված է պետական (սահմանադրական) իրավունքի նորմերի փոխկապակցված մի ամբողջ համակարգ, կամ ըստ էության առաջին անգամ ստեղծվում է հայ սահմանադրական իրավունքը<sup>2</sup>:

Իր համակարգված տեսքով (155 հոդ.) այն առանց վարանելու կարելի է դիտել որպես սահմանադրություն կամ սահմանադրական նախագիծ, որն ի դեպ, ԱՄՆ-ի (1787) և մյուս հայտնի սահմանադրություններից ավելի վաղ է ստեղծվել:

2. «Որոզայթ»-ի թե՛ տեսական և թե՛ օրենսդրական մասում քանիցս ընդգծվում է օրենքի գերակայության սկզբունքը, որպես ժամանակակից առումով և ս չափազանց կենսունակ՝ իրավական պետություն հասկացության էական տարրի: Ըստ որում, «Որոզայթ»-ը պահանջում է նաև, որպեսզի օրենքը ինքը լինի իրավական համապատասխանի բանական և բնական չափանիշներին՝ հասարակության իրական պահանջներին:

<sup>1</sup> «Որոզայթ փառաց»-ի մասին, տե՛ս նաև՝ Մ. Մ. Թելունց, *Չայ ազգային ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաբաղադրական միտքը*, ԴԴ ՉԱԱ «Գիտություն» իրատարակություն, Երևան, 1995:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 129 և մյուս էջերը: Ծանոթություն. «Որոզայթ փառաց»-ի հորելյանական տարբերվելը, որն ակտիվորեն մատնանշվում էր մամուլում, այդ թվում և ԴԴ Սահմանադրական դատարանում և ՉԱԱ-ում դրան նվիրված քննարկումներում, պայմանական է. գիտականորեն հիմնավորված է սակայն, որ «Որոզայթ»-ի ծնավորումը իրոք սկսվել է 18-րդ դարի 70-ական թվականների սկզբից, բայց Շահամիր Շահամիրյանի 1787 թ. հոկտեմբերի 15-ի նամակից անվիճելիորեն երևում է, որ 1787 թ. «Որոզայթ փառաց»-ը ամբողջությամբ ավարտված էր, սակայն դեռևս չէր տպագրվել: Այնպես, որ «225» հորելյանական թվի համար հիմք է ընդունվել գրքի տպագիր օրինակի վրա նշված «1773», հայկական «1222» թիվը (այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Մ. Թելունց, *Նշվ. աշխ.*, էջ 124-129):

Հենց վերնագրից՝ անվանումից սկսած, ամբողջ «Որոգայթ փառաց»-ը ներծծված է այդ գաղափարով: Այս առումով ևս «Որոգայթ»-ը աննախադեպ երևույթ է հայ իրավաքաղաքական մտքի պատմության մեջ:

3. «Որոգայթ»-ը առաջին անգամ նախատեսում, սահմանում է ապագա Հայաստանի պետական կառուցվածքը՝ պետության ձևը՝ ժողովրդավարական վարչապետական հանրապետություն՝ հիմնված իրավականության և «իշխանությունների բաժանման» սկզբունքների վրա: Երկրի միակ թագավորը՝ իշխողը, օրենքն է, իսկ օրենքը պետք է ընդունվի բոլորի կամքին համապատասխան, Հայոց տան պառլամենտի կողմից:

4. «Որոգայթ»-ը նախատեսում է բոլոր պաշտոնյաների, ինչպես և փոխանորդների (պատգամավորների) ետ կանչման սկզբունքը:

5. Ըստ «Որոգայթ»-ի բոլոր պաշտոնյաները ընտրովի են: Բոլոր պաշտոնյաները կենտրոնում թե տեղերում՝ փոխանորդները, նախարարները, զինված ուժերի հրամանատարները (սպարապետները), դատավորները այն անձինք են, որոնք սկզբնական փուլում, ընտրվել են անմիջապես ժողովրդի կողմից: Այսպիսի օրենք ներկայիս ոչ մի ժողովրդավարական ճանաչված երկրում չկա:

Վերջին շրջանում, մասնավորապես 1998-99 թթ. հանրապետության մամուլում, ինչպես նաև գիտական հանդեսներում նկատելիորեն ակտիվացել է հետաքրքրությունը «Որոգայթ փառաց»-ի նկատմամբ: Այն հատուկ քննարկման առարկա դարձավ ՀՀ Սահմանադրական դատարանում և ՀՀ ԳԱԱ-ում: Դա պատահական չէ, քանզի «Որոգայթ փառաց»-ին ուշադրություն է դարձրել դեռևս Յոզեֆ Էմինը (1726-1809), մեր դարաշրջանի պատմաբաններից՝ Լեոն (1860-1932), որն ի դեպ նկատի ունենալով «Որոգայթ»-ը և ընդհանրապես մադրասահայ ազատագրական խմբակի աննախադեպ ժողովրդավարական գաղափարները, դրանք անվանում է հեղափոխական կարմիր ծայրահեղություն<sup>3</sup>: «Որոգայթ փառաց»-ին նկատելի տեղ է հատկացրել ակադ. Աբգ. Յովհաննիսյանը՝ 1945 թվականին ռուսերեն լույս տեսած «Յոզեֆ Էմին» և 1947 թ. հրատարակած «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը XVIII հարյուրամյակի 80-ական թվականներին» գրքերում: Տարբեր առիթներով նրան անդրադարձել են նաև ուրիշ հեղինակներ: 1995 թ. ՀՀ ԳԱԱ կողմից հրատարակված «Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը» աշխատության մեջ «Որոգայթ փառաց»-ը ծավալուն և մանրամասն իրավաբանական հետազոտության ենթարկվեց. առաջին անգամ համակարգվեց «Որոգայթ փառաց»-ը որպես օրենքների հավաքածու՝ ըստ իրավունքի ճյուղերի՝ այդ թվում «Որոգայթ»-ի սահմանադրական (պետական) իրավունքին վերաբերվող նորմերը: Հնդկահայ լուսավորիչների թողած մշակութային արժեքների, մասնավորապես «Որոգայթ»-ի հետագա ուսումնասիրությունների և գնահատման գործում արժեքավոր ներդրում է պրոֆ. Գ. Ղ. Միրզոյանի «Հնդկահայ լուսավորականության ակունքները» հոդվածը, որում հեղինակը այն հիմնավոր կարծիքն է արտահայտում, որ հնդկահայ լուսավորականությունը, բնականաբար նաև «Որոգայթ փառաց»-ը դատարկության, ամայության մեջ ծնված հանկարծահայտ երևույթներ չեն, այլ առաջ են եկել հայ մշակույթի, հայ հասարակական, իրավաքաղաքական մտքի ամբողջ նախընթաց զարգացման հիմքի վրա<sup>4</sup>: Պրոֆ. Միրզոյանի հիշատակված գիտական հետազոտության մյուս, մեր կարծիքով ոչ պակաս արժեքավոր միտումն այն է, որ նա «Որոգայթ»-ի, մասնավորապես նրա հայկական ակունքների նոր հիմնարար ուսմունսսիրության միանգամայն ընդունելի հայեցա-

<sup>3</sup> Տե՛ս Լեո. *Հայոց պատմություն. հատոր երրորդ, զիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 315:*

<sup>4</sup> Տե՛ս Գ. Ղ. Միրզոյան. *Հնդկահայ լուսավորականության ակունքները, «Էքսիստենց», 1998, ժԲ, էջ 57-63:*

կետ է առաջադրում :

Կարծում ենք, որ «Որոգայթ»-ի նկատմամբ ուշադրությունը միայն նրա «ծննդյան 225-ամյակ»-ով չէ պայմանավորված: Այն, ըստ իս, պայմանավորված է նաև 1990 թ. սկսված և խորացող այն սոցիալ-տնտեսական, պետաիրավական ճգնաժամով, որն իր առավել ցայտուն դրսևորումն է ստանում ԳԳ 1995 թ. ընդունված գործող սահմանադրության գոյությամբ:

Որոնք են «Որոգայթ»-ում և ԳԳ 1995 թ. սահմանադրությամբ ամրագրված պետական կառույցների տարբերությունները:

«Որոգայթ փառաց»-ը նախատեսում է կառավարման հանրապետական ձևը: Կառավարությունը կազմվում է Գայոց տան կողմից, պատասխանատու է նրա առջև և ետ է կանչվում նրա Գայոց տան կողմից, եթե կառավարության անդամները, այդ թվում՝ կառավարության ղեկավարը, հանցագործություն են կատարել<sup>5</sup>: Կառավարության լիազորությունների ժամկետը 3 տարի է<sup>6</sup>:

Գայտնի է, որ կառավարման ձևի տեսակետից ԳԳ-ն համարվում է «կիսանախագահական» հանրապետություն<sup>7</sup>: Սա արդեն առաջին ևսկան տարբերությունն է «Որոգայթ փառաց»-ի և ԳԳ 1995թ. սահմանադրության՝ նրանցում ամրագրված պետության երկու մոդելների մեջ: Եթե նկատի ունենանք նաև ԳԳ կառավարման նախագահական կամ կիսանախագահական ձևի կողմից դուալիստական միապետությանը բնորոշ մի շարք հատկանիշների ժառանգումը, ապա անվիճելի է դառնում «Որոգայթ»-ում ամրագրված կառավարման ձևի առաջադիմական բնույթը՝ առավելությունը, ԳԳ կառավարման «կիսանախագահական» ձևի նկատմամբ: Փորձենք տալ «Որոգայթ»-ում ամրագրված պետության, պետական համակարգի մոդելի ընդհանրական նկարագիրը: Ըստ «Որոգայթ փառաց»-ի՝ Գայաստանի, հիմնականում Մեծ Գայթի<sup>8</sup>, 12000 տուն ունեցող յուրաքանչյուր գավառի մեջ մտնող յուրաքանչյուր գյուղից բոլորի կամքով ընտրվում է հայ լուսավորչական դավանանքի, ազգությամբ հայ, Գայաստանում ծնված, արական սեռի հեզ և խոնարհ մեկ անձ: Այնուհետև, տվյալ գավառից ընտրված այդ անձանցից վիճակահանությամբ<sup>9</sup> ընտրվում են երկու անձինք: Յուրաքանչյուր գավառից ընտրված այդ երկու անձանց բոլոր գյուղերի բոլոր գյուղապետները («քեֆխայք ամենայն գեղօրից») միաձայն ձեռնադրում և 3 տարով տալիս են փոխանորդության՝ պատգամավորության լիազորագիր՝ այսինքն ընտրության արդյունքները վավերացնում են տվյալ գավառի մեջ մտնող բոլոր գյուղերի գյուղապետներկայացուցիչները (ժամանակակից ընտրական հանձնաժողովների օրինակով): Այս երկու անձինք պառլամենտում Գայոց տանը, ներկայացնում են գավառի՝ 12 հազար տուն ունեցող բնակչության շահերը: Փաստորեն «Որոգայթ»-ը ընդգծում է, որ փոխանորդը՝ պատգամավորը, ներկայացնում է իր ընտրողների շահերը: Նկատենք, որ ԳԳ գործող սահմանադրության 66-րդ հոդվածը չի ընդունում հրամայական մանդատը՝ սահմանելով, որ պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով: «Որոգայթ»-ի պահանջը ավելի ժողովրդավարական է՝ ժողովրդի պատվիրակը չի կարող չներկայացնել իրեն՝ ընտրող ժողովրդի, առավել ևս տվյալ օկրուգի ընտրողների շահերը և «կաշկանդված չէ հրամայական մանդատով» սկզբունքը կամայական է: Այս առումով շատ ավելի ճիշտ կլիներ գործող սահմանադրության 66-րդ հոդվածը սահմանել հետևյալ կերպ.

<sup>5</sup> «Որոգայթ փառաց», Թիֆլիս, 1913, հոդ., հոդ. ի(20), ԻԱ(21), ԾԱ(51), ԾԲ(52), ԾԳ(53), ԾԴ(54), ԾԵ(55), ԾԶ(56) ևն, էջ 153, 173-182:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>7</sup> Տե՛ս Մ. Խաչատրյան, Գայաստանի Գանրապետության առաջին սահմանադրությունը, Երևան, 1997, էջ 31-32, 363:

<sup>8</sup> Տե՛ս Վ. Գրիգորյան, Ըահամիր Ըահամիրյանի «Աշխարհացոյց Գայաստանեայց»-ը, «Բանբեր Սատենադարանի», 1962, թիվ 6, էջ 353-361:

<sup>9</sup> Ի դեպ, վիճակահանության եղանակը առաջին անգամ մտցվեց նաև 1999 թ. ընդունված ԳԳ ընտրական օրենսգրքում՝ տե՛ս ԳԳ ընտրական օրենսգրքը, Երևան, 1999, էջ 79:

«Պատգամավորը ներկայացնում է իր ընտրողների և ամբողջ ժողովրդի շահերը՝ ղեկավարվելով օրենքով և իր համոզմունքներով»: Ընտրված երկու պատգամավորներից մեկը դառնում է օրենսդիր օրգանի՝ խորհրդարանի՝ Հայոց տան անդամ, մյուսը՝ գործադիր, կատարողական և դատական իշխանության գործառույթ է իրականացնում Հայոց տան հանձնարարությամբ, Հայոց տան կողմից տրված մանդատով՝ 3 տարի ժամկետով: Բոլոր փոխանորդների ընդհանուր թիվը, ըստ Շահամիրյանի, չի կարող լինել 500-ից պակաս<sup>10</sup>: Ըստ հաշվարկների նրանց ընդհանուր թիվը կազմում է 568 պատգամավոր<sup>11</sup>: Բայց օրենքների ընդունումը՝ Հայոց տան բուն լիազորությունը, իրականացնում են նրանց կեսը՝ 284 անձինք, մյուս կեսը դառնում են նախարարներ, դատավորներ, քաղաքապետեր, կազմում կառավարություն և:ն: Հայոց տունն օրենքն ընդունում է չորս ընթերցմամբ, ըստ որում՝ չորրորդում այն միայն քվեարկվում է, նախորդ երեք ընթերցումներում՝ քննարկվում: Օրենքն ընդունվում է պարզ մեծամասնությամբ (հոդվ. ԺԷ, 17): Հիշատակված հոդվածից երևում է, որ կառավարության ղեկավարը՝ նախարարը, և սմասնակցում է օրենքների ընդունմանը՝ երկու ձայնի իրավունքով: Սա շատ ուշագրավ նորմ է: Արտաքուստ թվում է, թե այն հակասում է «իշխանությունների բաժանման» սկզբունքին: Մեր կարծիքով ընդհակառակը, եթե պարզ արտահայտվենք, 284 ձայնի մեջ երկու ձայնը օրենսդիր իշխանությանը չի խանգարում, դրա փոխարեն, կառավարության դերը նկատի ունենալով, «Որոգայթ»-ը նրան հենու չի պահում օրենսդիր գործունեությունից՝ դրանով իսկ յուրահատուկ տարր մտցնում իշխանությունների հավասարակշռության մեխանիզմում: Երկու ձայն ունի նաև հոգևորական փոխանորդը: Մեր կարծիքով կարելի է քննարկել վերը հիշատակված (նախարարի և հոգևորական փոխանորդի վերաբերյալ) կանոններն էլ ՀՀ գործող սահմանադրության մեջ արտացոլելու հարցը՝ անշուշտ ժամանակաշրջանի առանձնահատկությունները հաշվի առնելով:

«Որոգայթ»-ի 18 (ԺԸ) հոդվածը սահմանում է, որ գործադիր և դատական իշխանության բոլոր պաշտոնյաները իրենց լիազորությունները ստանում են Հայոց տնից: «Ամենայն պաշտօն եթե նախարարութեան, եթե դատաւորութեան, եթե խորհրդակցութեան իշխանութեան, ամենայն կարգ զինուորութեան, դպրութեան, գծագրութեան և ամենայն կառավարութեան ի տանեն հայոց և ի տանուտերացէ (օրենսդիրներից - Մ. Թ.) ելցէ, և ի վերայ նոյն պաշտոնատարութեան տալոյ իշխանութիւն ի տանեն և տանուտերացէ հայոց թուղթ պաշտօնի ըստ Օրինաց»<sup>12</sup>:

Հիշատակված բոլոր պաշտոնյաները սկզբնապես, անմիջապես ժողովրդի կողմից ընտրված անձինք են, որոնք հետագայում դարձյալ ընտրությամբ (օր.՝ վիճակահանությամբ) ստանձնում են այս կամ այն պաշտոնը: Այսինքն՝ առանց բացառության բոլոր պաշտոնյաները՝ դատավորները, քաղաքապետերը, իրենց սկզբնական մանդատը անմիջապես ստանում են ժողովրդից, ժողովրդի կողմից ընտրված անձիք են, նշանակովի անձինք չկան: Սա «Որոգայթ փառաց»-ի և ՀՀ 1995 թ. սահմանադրության եական տարբերություններից մեկն է, բնականաբար ժողովրդավարության իմաստով հօգուտ «Որոգայթ փառաց»-ի խոսող տարբերություն, քանզի ՀՀ գործող սահմանադրության համաձայն բոլոր պաշտոնյաները՝ սկսած վարչապետից, նախարարներից, անգամ դատավորները նշանակովի են: Թեպետ ՀՀ սահմանադրությունը նույնիսկ հատուկ հռչակում է (հոդված 5) իշխանությունների՝ օրենսդիր, գործադիր և դատական, տարանջատման սկզբունքը, սակայն ՀՀ-ում գործադիր և դատական իշխանությունը իրավաբանորեն և փաստորեն միաձուլված են, քանզի բոլոր ատյանների՝ առաջին, վերջինից և վճռաբեկ դատավորները նշանակվում և ազատվում են ՀՀ նախագահի կողմից: Այսինքն՝ ստեղծված է մի վիճակ, որի վտանգավորության մասին նախագուշաց-

<sup>10</sup> Տե՛ս «Որոգայթ փառաց», էջ 64:

<sup>11</sup> Տե՛ս Մ. Ս. Թեյլունց, *Նշվ. աշխ.*, էջ 157:

<sup>12</sup> «Որոգայթ փառաց», էջ 152:

նում էր դեռևս Մոնտեսքյուն (1689-1755)<sup>13</sup>:

Կամ այս առումով վերցնենք ՀՀ Սահմանադրական դատարանը՝ երկրում «ամենաբարձր դատական հսկողություն» իրականացնող մարմինը: Նրա անդամների մի մասին նշանակում է ՀՀ նախագահը, մյուս մասին՝ Ազգային ժողովը: Ամենամանհեթեթը այն է, որ հենց նրանց՝ «իրեն նշանակողների» ընդունած իրավական ակտերի օրինականությունն էլ պետք է ստուգի սահմանադրական դատարանը: «Որոգայթ»-ը ճիշտ է լուծել խնդիրը՝ նշանակովի պաշտոն, այդ թվում դատավորների, չկա, բոլորն էլ ընտրովի են: Այս սկզբունքը միանգամայն արդիական է, անառարկելիորեն նաև ժողովրդավարական և պետք է անաբայմանորեն փոխառնվի «Որոգայթ»-ից, կիրառվի ՀՀ սահմանադրության մեջ:

Ըստ «Որոգայթ»-ի, բոլոր հիշատակված պաշտոնյաներին Հայոց տունը մանդատ է տալիս «նամակ պաշտօնատարութեան» 3 տարով: Պաշտոնը զբաղեցնելուց առաջ նրանք երդում են տալիս հավատարիմ մնալու օրենքին, Հայոց տանը (հոդվ. ԼԴ 34): Բոլոր պաշտոնյաները՝ սկսած վարչապետից, մինչև ռազմական գերատեսչությունների ղեկավարները, քաղաքապետները, դատավորները, կարող են ետ կանչվել, եթե հակասիրենական արարք կկատարեն (հոդվ. հոդվ. ԾԳ (53), 3Խ (340), ՄԼԶ (289) և ն):

Օրենսդիր օրգանը՝ Հայոց տունը, ղեկավարում կամ նրա նախագահությունն են կազմում վիճակահանությամբ՝ բոլոր փոխանորդներից ընտրված երեք տանուտերերը, որոնց վրա դրվում է նաև մյուս պաշտոնատարների երդումն ընդունելու պարտականությունը: Այս երեք տանուտերերի ղեկավարը Հայր Հայաստանյայցն է<sup>14</sup>: Ըստ «Որոգայթ փառաց»-ի, «...այս երիս տանուտերքս ունին իշխանութիւն հանդերձ բոլոր տանուտերքս ընդունիլ յօրենս և տալ իշխանութեան ամենայն պաշտօնի ըստ վեց տասան և ութն տասաներորդ. յօրենս»<sup>15</sup> (ընդգծումը մերն է - Մ. Թ.): Հիշատակված հոդվածը (ԽԳ 43) ավելի հստակ է նշում, որ 12.000 տուն՝ ունեցող յուրաքանչյուր գավառից ընտրված երկուական պատգամավորներից մեկը տանուտեր է՝ օրենսդիր մարմնի անդամ. «...իւրաքանչիւր երկուտասան հազար տանց երկու փոխանորդիւք, և ըստ հատոր տասնիններորդ Օրինաց իւրաքանչիւր երկու փոխանորդաց մի իշխան տանուտերութեան...»<sup>16</sup>: Նույնը ընդգծում է ԺԹ (19) հոդվածը. «Բոլոր յաշխարհէն հայոց որքան փոխանորդք որ գտցի կեն ի նոցանէ, այսինքն մի ի երկուց արանց մտցի ի կարգ տանուտերութեան և միս մինն ի պաշտօն իշխանութեան»<sup>17</sup>: Այսինքն, սկզբից բոլոր փոխանորդներից ընտրվում է «Հայր Հայաստանյայցը», իսկ վերջինս ղեկավարում է դարձյալ բոլոր փոխանորդներից՝ «Ազգային ժողովի»՝ Հայոց տան, նախագահության կազմումը, ինչպես նաև երեք տանուտերերի ընտրությունը (դարձյալ բոլոր փոխանորդներից) և երդում ընդունում նրանցից՝ ապա. «...տալոյ նոցայ իշխանութիւն տանուտերութեան...»<sup>18</sup>: Այնուհետև նշված 4 տանուտերերի նախագահությամբ սկսվում է պետական ամբողջ համակարգի ձևավորումը՝ մյուս պաշտոնյաների ընտրությունը:

Հստակեցնենք: Իշխանության կամ իշխանության մարմինների ձևավորման պատկերը:

Առաջին փուլ: Ընտրություն. 12.000 տուն ունեցող յուրաքանչյուր գավառի մեջ մտնող ամեն մի գյուղից ընտրվում է մեկ անձ, փոխանորդի թեկնածու:

Երկրորդ փուլ: Ընտրված այդ բոլոր անձինք հավաքվում են ըստ գավառի և գավառի բոլոր գյուղերից ընտրված մեկական անձինք վիճակահանությամբ իրենց միջից ընտրում են ընդամենը երկու անձանց: Գավառի ավագանին՝ բոլոր գյուղապետները (քեօֆխայք), տարեցները՝ ավագները, գավառի իշխանները, հավաքվում և ամբողջ գավառը

<sup>13</sup> Sté. W. Montesquieu, *Избранные произведения*, М., 1996, էջ 290-291:

<sup>14</sup> «Որոգայթ փառաց», էջ 159-160, 167-171:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 168:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 167:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 159-160:

պառլամենտում՝ Հայոց տանը ներկայացնելու համար վիճակահանությամբ ընտրված այդ երկու անձանց լիազորում են՝ «միաբան ձեռնադրելով թուրք փոխանորդութեան տացեն»՝ 3 տարով լինելու փոխանորդ, ըստ որում, այս փուլում ոչ թե որոշվում է, թե ով պետք է լինի պաշտոնատար, ով՝ տանուտեր՝ օրենսդիր մարմնի անդամ, այլ նրանք լիազորվում են, նրանց իրավունք է վերապահվում ապագայում հաջորդ փուլում, սահմանված կարգով (վիճակահանությամբ) լինելու կամ պաշտոնատար՝ գործադիր կամ դատական իշխանության կրող կամ օրենսդիր մարմնի անդամ՝ որը որոշվում է երրորդ փուլում:

Երրորդ փուլում հավաքվում են բոլոր 568 փոխանորդները, որոնք իրենց հերթական գումարման առաջին նիստում բոլոր փոխանորդներից վիճակահանությամբ (հողվ. ԼԵ՝ 35, ԼԶ՝ 36, ԽԳ 43) ընտրում են «Հայր Հայաստանայց»-ին: Վերջինս սկսում է ղեկավարել նիստը և անմիջապես անցնում նախագահության կազմավորմանը. բոլոր փոխանորդներից ընտրվում է 3 անձ՝ տալով տանուտերության մանդատ: Ապա այս 4 տանուտերները շարունակում են նախագահել «Հայր Հայաստանայց»-ի գլխավորությամբ: Այս փուլում մասնակցում են բոլոր 568 փոխանորդները, որոնցից 4-ը, ինչպես տեսանք, արդեն տանուտեր ընտրվեցին:

Չորրորդ փուլ: Հայոց տան նախագահությունը (4 տանուտեր) շարունակում է գործընթացը: Այս փուլում վիճակահանությամբ բոլոր փոխանորդներից ընտրում են դատավորներ, զինված ուժերի ղեկավարներ (սպարապետներ, հազարապետներ և այլն) 284 անձ և մանդատ տալիս նրանց: Մնացած 284-ը (568-ից) մնում է օրենսդիր օրգանի անդամ<sup>19</sup>: Այս փուլին է վերաբերում նաև 13 անդամից (12 անդամ՝ նախարար-վարչապետի գլխավորությամբ) բաղկացած կառավարության կազմումը:

«Որոգայթ»-ի ԽԹ (49) հողվածի բովանդակությունից և հողվածների շարադրման հերթականությունից կարելի է ենթադրել, որ կառավարությունը կազմվում է վերջում, սակայն բոլոր 568 փոխանորդների (որոնցից մինչ այդ (չորրորդ փուլում) արդեն ընտրվել են սպարապետներ, դատավորներ, քաղաքների կառավարիչներ և այլն) մասնակցությամբ<sup>20</sup>: Կառավարությունը ևս ընտրվում է վիճակահանությամբ<sup>21</sup>: Այսինքն՝ կառավարությունը ամբողջությամբ կազմվում է պառլամենտի կողմից և պատասխանատու է նրա առաջ: Ըստ որում՝ պատասխանատու է միայն մի հարցում՝ եթե խախտում է օրենքը: Այդպիսի դեպքում կառավարության անդամները, վարչապետից սկսած պետք է ետ կանչվեն և զրկվեն իրենց լիազորությունից: Հայոց տան կողմից:

Հայտնի է, որ ՀՀ գործող սահմանադրության համաձայն կառավարության ղեկավարին՝ վարչապետին, նշանակում է նախագահը: Այնուհետև նախագահը վարչապետի ներկայացմամբ նշանակում է նաև կառավարության մյուս անդամներին: Թե մեկ և թե մյուս դեպքում պառլամենտի՝ Ազգային ժողովի համաձայնությունը պետք չէ: Կառավարությունը պատասխանատու է միայն իրեն նշանակողի՝ նախագահի առջև: Շահամիրյանը չի ընդունում այս տարբերակը. բոլոր պաշտոնյաները պետք է ենթարկվեն Հայոց տանը: Այս տարբերակին կարելի է թե դեմ արտահայտվել և թե կողմ: Դեմ, որովհետև թվում է, թե կառավարությունը ամբողջությամբ Հայոց տան վերահսկողության տակ է, և օրենսդիր ու գործադիր իշխանությունների միջև հավասարակշռող մեխանիզմ չկա: Բայց սա հիմնականում թվացող է: Որովհետև «Որոգայթ»-ի հեղինակները պետության իրենց մոդելը կազմել են բոլորի, այդ թվում Հայոց տան, օրենքին խըստիվ ենթարկվելու սկզբունքով, այդ սկզբունքը պահպանելու աներեր ցանկությամբ: Աս, հայտնի չափով ուսուպիական լինելով, այնուամենայնիվ արդարացված է, քանզի «Որոգայթ փառաց»-ը ապագայի համար էր նախատեսված, գործող փաստաթուղթ չէր: Մյուս կողմից՝ նման վիճակը լիովին համապատասխանում է կառավարման պառլամենտական ձևին:

<sup>19</sup> Այդ մասին ալելի մանրամասն տես Մ. Թելունց, *Նշվ. աշխատությունը*:

<sup>20</sup> Տես «Որոգայթ փառաց», էջ 172-173:

<sup>21</sup> Լույն տեղում:

Ինչպես արդեն նշեցինք, «Որոգայթ»-ի անվիճելի առավելությունը ՀՀ գործող սահմանադրությունից ոչ միայն այն է, որ «Որոգայթ»-ում բոլոր պաշտոնյաները ընտրովի են, այլև այն, որ նրանք, սկսած վարչապետից մինչև քաղաքապետը, դատավորից մինչև զինված ուժերի հրամանատարները՝ սպարապետները և հազարապետները, կարող են ետ կանչվել, եթե հանցագործություն են կատարում: Այս սկզբունքն ի սկզբանե առաջադրվել և արտացոլվել է «Որոգայթ փառաց»-ի թե տպագիր տեքստում և թե Մատենադարանում պահպանված նրա ձեռագիր օրինակներում<sup>22</sup>: Մերժելով իր իսկ (ժողովրդի) ընտրած, բայց և իր վստահությունը չարդարացրած պատգամավորին քաղաքացիական նախաձեռնության կարգով ետ կանչելու իրավունքը՝ ՀՀ գործող սահմանադրությունը՝ հակառակ նույն սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներում հռչակված ՀՀ-ն ժողովրդավարական պետություն է, կամ իշխանությունը պատկանում է ժողովրդին կարգախոսներին, ժողովրդին գրկել է իշխանության մարմինների գործունեությունը վերահսկելու գործուն միջոցներից մեկից:

Հարկ է նշել, որ ետ կանչման իրավունքը հռչակվել էր Հայաստանի առաջին պաշտոնապես ընդունված սահմանադրության (1922 թ.), 1937 թ. ընդունված երկրորդ և 1978 թ. ընդունված՝ երրորդ սահմանադրության մեջ, ինչպես նաև ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և տեղական խորհուրդների պատգամավորներին ետ կանչելու մասին հատուկ օրենքներում<sup>23</sup>: Կան նաև այլ, ոչ քիչ թվով զուգահեռներ, որոնք կարելի է անցկացնել «Որոգայթ փառաց»-ի և ՀՀ գործող սահմանադրության միջև, սակայն «Որոգայթ»-ի հիմնական, անվիճելի առավելությունը ՀՀ սահմանադրությունից (ի դեպ ոչ միայն ՀՀ սահմանադրությունից) այն է, որ ըստ «Որոգայթ»-ի, բոլոր պաշտոնյաները՝ օրենսդիր, դատական և գործադիր իշխանություն կրողները, անմիջապես ժողովրդից ընտրված մարդիկ են և առանց բացառության բոլորն էլ կարող են վաղապես ետ կանչվել ընտրողների վստահությունը չարդարացնելու՝ օրենքը խախտելու, հանցագործությունների կատարման համար: Սա «Որոգայթ փառաց»-ի անվիճելի առավելությունն է: ՀՀ սահմանադրությամբ ոչ միայն գործադիր իշխանության, այլև նույնիսկ դատական իշխանության կրողները, նախարարները, դատավորները նշանակովի են և ետ կանչման ենթակա չեն: Սա ՀՀ սահմանադրության անվիճելի թերությունն է, արատը:

Մյուս հարցը՝ զուգահեռը, «Որոգայթ փառաց»-ը ժամանակակից օրենսգրքի ոգով չի ասում, թե օրինակ, ընտրողների որերորդ մասը կամ քանի տոկոսը պետք է մասնակցի ընտրություններին, որպեսզի այն վավերական ճանաչվի, սակայն դրա փոխարեն այն հստակ սկզբունք է առաջադրում՝ բոլոր պատգամավորները՝ փոխանորդները (յուրաքանչյուր գյուղից), ընտրվում են բոլորի կամքով, բոլորի կողմից. «Ըստ կամաց և հաճոյից բոլորեցունց ի իւրաքանչ ամենայն գեօղէ...»<sup>24</sup>: Տարակույս չկա, որ ըստ «Որոգայթ»-ի սկզբունքների ամբողջ գյուղը կարող էր հավաքվել և իր ապագա ներկայացուցիչ-պատգամավորը ընտրել պառլամենտի համար: Հայտնի է, որ նախկին ՀԽՍՀ-ում (բնականաբար նաև ԽՍՀՄ-ում) գործող օրենսդրությամբ ամրագրված էր մի շատ կարևոր ժողովրդավարական սկզբունք - պայման ընտրությունը տվյալ օկրուգում վավերական է ճանաչվում միայն այն դեպքում, երբ քվեարկությանը մասնակցում է ընտրողների ցուցակների մեջ մտած ընտրողների՝ ընտրելու իրավունք ունեցողների ոչ պակաս կեսը<sup>25</sup>: Առաջին փոփոխությունը ՀՀ ընտրական օրենսդրության մեջ, որ կատարեցին երրորդ հանրապետության առաջին տերերը, դա 1990 թվականի հոկտեմբերի

<sup>22</sup> Տե՛ս «Որոգայթ փառաց», հոդ., հոդ. ԾԲ(52), ՍԼԶ(236), ԴԴ(241) և այլն. տե՛ս նաև Մաշտոցի անվան Մատենադարան ձեռագիր 7886, էջ 108-109, 289, ձեռագիր 3101, էջ 126, 181, ձեռագիր 3102, էջ 128-129, 180:

<sup>23</sup> Տե՛ս Ե. Ն. Պետրոսյան, Սովետական պետականության հաստատումը և ամրապնդումը Հայաստանում, Երևան, 1958, էջ 158, ՀՍՄՀ գործող օրենսդրության համակարգված ժողովածու, հ. 1, Երևան, 1978, էջ 28, 73-76, 388-390, ՀՍՄՀ սահմանադրություն, Երևան, 1987, էջ 36:

<sup>24</sup> «Որոգայթ փառաց», էջ 147-148:

<sup>25</sup> Տե՛ս օր., ՀՍՄՀ օրենքը ՀՍՄՀ Գերագույն սովետի ընտրությունների մասին, Երևան, 1979, էջ 32-33, ՀԽՍՀ օրենքը ՀԽՍՀ Ժող. դեպուտատների տեղական խորհուրդների դեպուտատների ընտրությունների մասին (ընդունված 13.02.1990 թ.), Երևան, 1990, էջ 24 և այլն:

17-ին ընդունված օրենքն էր, որով տեղական խորհուրդների ընտրության մասին օրենքում ջնջեցին «ոչ պակաս կեսը» բառերը և այն փոխարինեցին «ընտրողների ցուցակների մեջ մտցված ընտրողների ընդհանուր թվի ոչ պակաս 25 տոկոսը» բառերով<sup>28</sup>։ Այսինքն, կեսը դարձավ 25 %, և ապա 1999 թ. ընտրական օրենսգրքում այդպիսի չափանիշը ընդհանրապես վերացվեց, ըստ էության ոչնչի վերածելով ժողովրդի ծայրը։ Կարող են պատճառաբանել (և փաստորեն ոչ պաշտոնական պատճառաբանում են), որ ժողովուրդը չի գնում ընտրության։ Իրոք, չի գնում։ Բայց չի գնում, որովհետև չի հավատում հռչակված ժողովրդավարությանը։ Որովհետև պետական համակարգը վատ է, կառուցվել է ոչ իրավական հիմքի վրա։

Ուրեմն, սոցիալ-տնտեսական իրավիճակն ու պետական համակարգի սկզբունքները պետք է փոխել, այլ ոչ թե անպայման ընտրվելու՝ իշխանությունը պահպանելու համար աստիճանաբար ժողովրդին զրկել ընտրելու իրավունքից, իշխանության ձևավորմանը և կազմակերպմանը մասնակցելու իրավունքից։ Երրորդ տարբերակը՝ սահմանադրությունից «ժողովրդավարական պետության», «Իշխանությունը պատկանում է ժողովրդին» կարգախոսները հանելն է...:

Այսպիսով «Որոգայթ»-ում ամրագրված պետության մոդելի և ՀՀ գործող սահմանադրությունում ամրագրված պետական մոդելի միջև կան էական տարբերություններ։ Ըստ որում, ՀՀ գործող պետական կառուցվածքը, պետությունը իրապես ժողովրդական դարձնելու համար, մեր կարծիքով, «Որոգայթ»-ից պետք է փոխառնվեն՝ իհարկե ոչ մեխանիկորեն, հետևյալ սկզբունքները. անխտիր բոլոր պաշտոնյաների անմիջապես ժողովրդից ընտրվելու, գոնե սկզբնական փուլում, սկզբունքը։ Ուշագրավ է, որ «Որոգայթ»-ի ՅԽԱ (341) հոդվածը ուղղակիորեն սահմանում է, որ իշխանության բոլոր թեքումն էլ պաշտոն կարող են զբաղեցնել միայն նրանք, ովքեր նախապես ստացել են ժողովրդի հավանությունը. սկզբնական փուլում ընտրվել են որպես փոխանորդ։ Հաջորդ, ոչ պակաս կարևոր սկզբունքը, բոլոր պաշտոնյաների վաղաժամկետ ետ կանչելու սկզբունքն է։ Մյուս հանգամանքը, ըստ «Որոգայթ»-ի պետությունը ունի կառավարման պառլամենտական կառուցվածք, որն, անշուշտ, առավել ժողովրդավարական է նախագահական ձևի համեմատ։ Սակայն, մեր համոզմամբ, բոլորովին էլ պարտադիր չէ ՀՀ կառավարման նախագահական, ավելի ճիշտ խառը ձևը պառլամենտականով փոխարինելը, դա ինքնին ոչինչ չի ասում։ Կառավարման նախագահական ձևը և ս կարող է լիովին արդարացնել իրեն, եթե պետական ամբողջ կառույցը խարսխված է իրավական հիմքի վրա. հաշվի է առնվում հասարակության իրական պահանջներն ու ժողովրդի իրական կամքը։ Այս առումով պետք է արձատապես, իրավաբանորեն փոխվի ՀՀ-ում գործող ամբողջ ընտրական համակարգը։ Այդ համակարգը ակնհայտորեն արատավոր է, քանզի փաստորեն ժողովրդին հեռացնում է պետական կառույցի ձևավորման, պետական իշխանության կազմակերպման գործընթացին իրական մասնակցություն ունենալու հնարավորությունից։ Որքան էլ զարմանալի թվա, մեր խորին համոզմամբ, նման իրավաբանորեն և փաստորեն արատավոր ընտրահամակարգը ոչ թե անփորձության կամ պատահական այլ հանգամանքների արդյունք է, այլ արված է միտումնավոր՝ քաղաքական և սուբյեկտիվ նպատակներով։ Եվ այս առումով, իրական ժողովրդավարության ապահովումը հնարավոր է, եթե իրավաբանորեն սահմանված ժողովրդավարական համակարգը և փաստորեն գործող քաղաքական ռեժիմը չեն հակադրվում միմյանց։ Սա իր հերթին տառնում է դեպի մի շարք այլ հանգուցային խնդիրների առաջադրմանը և լուծմանը։ Բնականաբար այդ խնդիրները չեն կարող տեղավորվել մեր այս ուսումնասիրության շրջանակներում, ուստի հարկ ենք համարում նշել միայն այսօր գոյություն ունեցող պետական համակարգի առավել մտահոգող մեկ այլ արատի մասին։ ՀՀ-ում օրենքներն ընդունվում են, մեղմ ասած, առանց լրջորեն կշռադատելու դրանց ընդունման օբյեկտիվ նախադրյալները, հիմքերը։ Գոնե հիմ-

<sup>28</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-95)», երևան, 1995, էջ 20:



նական օրենքները՝ սահմանադրությունը, սեփականության մասին օրենքը, սեփականաշնորհման մասին օրենքը, պետք է ընդունվեն միայն ու միայն հասարակության իրական պահանջների նախնական հիմնարար ուսումնասիրություններից հետո, խստորեն հաշվի առնելով նաև խնդրի ազգագրական, պատմաիրավական, սոցիոլոգիական ասպեկտները: Մինչդեռ ՀՀ Ազգային ժողովը՝ երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը, որպես կանոն, փաստորեն զբաղված է օրենքների թողարկմամբ: Արդյունքը՝ հարյուրավոր ոչ «ստանդարտ օրենքներ», ապօրինություններ, իշխանության օրենքի և ոչ թե օրենքի իշխանության փաստական գերակայություն, սրվող սոցիալական կոնֆլիկտ ևն: Այս իմաստով, մեզանից ավելի քան 200 տարի առաջ ստեղծված «Որոգայթ փառաց»-ի առավելություններից մեկն էլ հենց այն է, որ նրա հեղինակը (կամ հեղինակները) ձգտել են ամեն կերպ թուլացնել սոցիալական լարվածությունը, հասարակության մեջ հնարավորին չափով պահպանել սոցիալական հավասարակշռություն և ներդաշնակություն: Եվ սա արտահայտվում է ոչ միայն «Որոգայթ»-ի հռչակած այն հիմնարար սկզբունքներում, որ երկիրը կարող են կառավարել միայն անմիջապես ժողովրդից ընտրված անձինք, որ օրենքները պետք է ընդունվեն բոլորի կամքով՝ ամբողջ ժողովրդի հավանությամբ և այլն, նաև նրա բազմաթիվ կոնկրետ իրավանորմներում՝ որոնք անթույլատրելի են համարում աղքատների, տնանկների, բուժման, կրթություն ստանալու համար միջոցներ չունեցող հայկական ապագա պետության քաղաքացիների առկայությունը: Պետությունը պետք է գործնական հոգատարություն դրսևորի այդպիսի անձանց՝ իր քաղաքացիների նկատմամբ, իր վրա վերցնի նրանց գոյության կյանքի իրավունքի ապահովման գործը<sup>27</sup>: Այս և բազմաթիվ այլ ուշագրավ նորմերի առումով «Որոգայթ փառաց»-ը իրավամբ կարելի է համարել ոչ միայն հայ, այլև նաև համաշխարհային առաջադեմ իրավաքաղաքական մտքի հազվադեպ գլուխգործոցներից մեկը:

**М. М. Телуниц - Модель государства по "Западне честолубия".** - В исследовании проводятся параллели между государственными устройствами, государственно-правовыми институтами закреплёнными в одном из первых конституционных проектов мира: "Западне честолубия", созданного в начале 70-х годов 18-го века в армянской колонии Мадраса и в Конституции РА, принятой 5 июля 1995 года.

На основе сравнительного анализа делается ряд конкретных предложений, направленных на совершенствование государственного устройства и Конституции РА.

<sup>27</sup> Տե՛ս «Որոգայթ փառաց», էջեր՝ 205-207, 210-212, 243-244, 256-257, 264-265, 270-271: